

ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՋՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԼՂՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիների ընտրությունը այսօր հրատապ է, ինչը ԼՂՀ կառավարման մարմինների համար հարկային հարաբերությունների կատարելագործման հիմնախնդիրը առավել դժվար կառավարվող է դարձրել: Հարկերը պետք է դառնան ոչ միայն բյուջեի հավասարակշռության ապահովման գործիք, այլև երկրի տնտեսության զարգացման հզոր խթան, նպաստեն արտադրության տեխնոլոգիականության բարձրացմանը, տնտեսական շահերի հավասարակշռմանը, սեփականության բոլոր ձևերի ամրապնդմանը: Այս առումով հարկերի արդյունավետ օգտագործման կարևոր ուղղությունն է փոքր գործարարության խթանման գործում դրանց դերի բարձրացումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոքր ձեռնարկությունների քանակի աճը, դրանց արդյունավետության բարձրացումը ինքնաձեռնարկական է, այլ շուկայական միջավայրի ձևավորման, տնտեսական աճի ապահովման պայմանների և այդ հիմքի վրա բնակչության կենսամակարդակի բարձրացմանը ուղղված էական քայլ: Տնտեսական բարեփոխումների սկզբնական շրջանում ԼՂՀ կառավարությունը պատշաճ ուշադրություն չդարձրեց փոքր գործարարության զարգացմանը, անտեսվեց նրա դերը երկրի տնտեսական զարգացման գործընթացում և պաշտոնապես չխրախուսվեց ձեռնարկատիրական գործունեության աջակցության կոորդինացված համակարգի ձևավորումը: Ասվածը կարելի է հիմնավորել փոքր գործարարության զարգացումը խոչընդոտող որոշ հանգամանքների դեմ տարվող ոչ լիարժեք պայքարով:

- Նախ և առաջ պետք է նշել ԼՂՀ-ում սկզբնապես գործող հարկերի բարձր դրույքաչափերի մասին, ակնհայտ է, որ եթե կառավարությունը հարկման բարձր դրույքաչափերով ֆինանսական հաշվեկշռվածության և բյուջեի ոչ պակասորդայնության նպատակ է հետապնդել, ապա դրանով իսկ

սահմանափակել է փոքր գործարարության զարգացման հնարավորությունները՝ լավագույն դեպքում նրանց թողնելով ստացված շահույթի ընդամենը 5-10 տոկոսը:

- Երկրորդ հանգամանքը կապված է բարեփոխումների ընթացքի տրամաբանության հետ: Փաստորեն, պատերազմի վերսկսման վտանգի առկայությամբ շուկայի ձևավորմանն ուղղված բարեփոխումները ԼՂՀ-ում իրականացվում են վարչական մեթոդներով՝ վերևից, արդյունքում անտեսվում է շուկայական տնտեսության հիմքը կազմող ձեռնարկատիրոջ շահը: Եվ քանի որ շուկայական տնտեսության ստեղծման տրամաբանությունը պահանջում է «ներքևից-վերև» շարժում՝ ձեռնարկատիրոջ շահերից շուկայական ենթակառուցվածքների ստեղծում (հարկային, վարկային, արժութային քաղաքականության, բանկեր, արժեթղթերի շուկա), որոնք էլ սպասարկում և իրացնում են այդ շահերը, պարզ է, որ օբյեկտիվորեն ընտրված մեթոդները զգալի հակասություններ են ծնել փոքր գործարարության զարգացման բնագավառում:

- Փոքր ձեռնարկությունների զարգացման լուրջ խոչընդոտ է ԼՂՀ ներքին շուկայի ցածր պահանջարկը: Այսօր Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի ներքին շուկաները հեռու են հագեցածության կետից, սակայն զարգացած տնտեսությունը ենթադրում է ձեռնարկությունների գործունեության կողմնորոշում առավելապես դեպի արտաքին շուկաներ:

- Հաջորդ հանգամանքը փոքր ձեռնարկությունների կապիտալի ձևավորման աղբյուրների բացակայությունն է: Բնակչության խնայողությունները լրիվությամբ ոչնչացվեցին հիպերինֆլացիայի ազդեցությամբ, իսկ պատերազմի հետևանքները և անցումային շրջանի տատանումները արգելակում են նոր խնայողությունների ձևավորման գործընթացը: Չի բացառվում նաև, որ ձևավորված խնայողությունները հիմնականում չեն ներդրվի արտադրության ոլորտ, քանի որ դեռևս առկա է ո՞չ պատերազմ, ո՞չ խաղաղություն իրավիճակը: Բանկային վարկերը մատչելի չեն փոքր ձեռնարկությունների համար, քանզի բնութագրվում են բարձր դրույքաչափերով, գրավապահովվածության բարձր պահանջներով և սեղմ ժամկետներով, ինչը դրանց զուտ առևտրային ուղղվածություն է տալիս: Բացի այդ առևտրային բանկերը խուսափում են իրենց միջոցները փոքր գործարարության բնագավառում ներդնելուց, քանի որ

դրանք ենթադրում են բարձր ռիսկ և հիմնավորված երաշխիքների բացակայություն: Ինչ վերաբերում է սեփականաշնորհման հավաստագրերին, ապա այս աղբյուրը ԼՂՀ-ում, կապված մասնավորեցումը առանց սեփականաշնորհման հավաստագրերի իրականացման հետ, լրիվությամբ բացակայում է: Չնայած կարող ենք նշել, որ ՀՀ-ում սեփականության հավաստագրերի առկայությունը ևս շոշափելի արդյունքներ չի տվել դրանց անվանական արժեքի չնչին լինելու պատճառով (1994թ սեպտեմբերից 10,0 հազ.դրամ, 1995թ մարտից 20,0 հազ.դրամ), և դրանք ներդրումային ռեսուրս լինել չեն կարող:

- Կարևոր է նաև փոքր գործարարության պետական աջակցության բացակայությունը: Չնայած 2001թ մայիսի 18-ի «Փոքր և միջին գործարարության պետական աջակցության» մասին ԼՂՀ օրենքի ընդունմանը՝ այսօր ԼՂՀ-ում բացակայում է փոքր և միջին գործարարության կայացմանն ու զարգացմանը նպաստող պետական կառույցը: Համեմատության համար նշենք, որ Գերմանիայում փոքր ձեռնարկությանը տրվող սուբսիդիաները կազմում են տարեկան 4մլրդ մարկ, ԱՄՆ-ի կոնգրեսում գործարարության հիմնահարցերով զբաղված են երկու կոմիտեներ, յուրաքանչյուր նահանգում կա տարածքային բաժանմունք¹:

Փոքր գործարարության պետական աջակցության անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսության մեջ դրանց լայն ընդգրկունությամբ, դրանց զարգացումը ապահովում է տնտեսության ճկունությունը, արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի իջեցումը, տեղական հանքահումքային ռեսուրսների օգտագործմամբ երկրի տնտեսական կախվածության թուլացումը ներմուծումից, նորանուծությունների արագացված յուրացումը, ազատ մրցակցության և օրինապահ միջին խավի ձևավորումը, ինչը երաշխավորում է քաղաքացիական հասարակության ժողովրդավարական հիմքերի կայունությունը: Փոքր գործարարության զարգացման և աջակցության կարևոր օղակներից մեկը հյարկային քաղաքականությունն է: Փոքր գործարարությունը և հարկերը յուրօրինակ խաղային մոդելներ են, որտեղ երկու կողմերը պետությունը և գործարարը, պայքարում են շահույթի համար: Ըստ որում,

1. И.Н.Герчиков "Международное коммерческое дело" учебник для ВУЗов, 1998г.

պետության՝ որպես խաղընկերոջ, դերը մշտապես գնահատվում է գործարար մարդու կողմից. ոչ ոք չի ցանկանում ունենալ անգործունակ խաղընկեր: Տվյալ դեպքում 50/50 տոկոսային հարաբերությունը քաղաքակիրթ մոտեցում է, այդ սահմաններից դուրս գալու դեպքում պետությունը չպետք է պայմաններ թելադրի, այլ ապացուցի իր կողմից փոքր գործարարության արդյունավետ աջակցության նշանակությունը, մասնավորապես, սեփականության պաշտպանության, շուկայի ուսումնասիրության, ձեռնարկատերերի կյանքի պաշտպանության ուղղություններով: Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների փորձը վկայում է, որ անհրաժեշտ է փոքր գործարարության բնագավառում կիրառել հարկերի դրույքաչափերի փոփոխությունները և հարկային արտոնությունների լայն կիրառում: Սակայն կարող ենք ասել, որ ԼՂՀ-ում չկան փոքր և միջին գործարարության համար հարկային քաղաքականության մասով որևէ հատուկ մոտեցում և հարկային արտոնություն՝ նոր ստեղծվող ձեռնարկությունների համար: ԼՂՀ-ում հարկային քաղաքականությունը նախ և առաջ պետք է ուղղված լինի հարկային բազայի ընդլայնմանը, ինչը հնարավորություն կտա եականորեն մեծացնել բյուջեի մուտքերը առանց հարկային բեռի ծանրացման: Իսկ հարկման բազայի ընդլայնման գործում ռեալ քայլ է փոքր գործարարության զարգացման համակողմանի խթանումը: ԼՂՀ-ում հարկվում են փոքր ձեռնարկությունների եկամուտները, գույքը, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շրջանառությունը: Համապատասխան հարկման բազայի առկայության դեպքում փոքր ձեռնարկությունները ԼՂՀ-ում վճարում են շահութահարկ, եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, գույքահարկ, հողի հարկ, հաստատագրված վճար, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումներ:

Փոքր գործարարության տեսակարար կշիռը, նրա դերն ու ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա դժվար է գնահատել, քանի որ օրենսդրորեն ընդունված չէր դրա սահմանումը և, բնականաբար, վիճակագրության կողմից չէր իրականացվում այդ ոլորտի առանձնացված հաշվառում: ԼՂՀ հարկային պետական վարչություն 2001թ տարեկան հաշվետվություն ներկայացրած 890 կազմակերպությունների ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ փոքր

ծեռնարկությունների քանակը կազմում է ընդհանուրի 84 տոկոսը, իրացման ծավալը՝ ընդհանուր իրացման ծավալի 64 տոկոսը, հաշվարկված հարկերը ընդհանուր հաշվարկված հարկերի 53 տոկոսը:

**ԼՂՀ փոքր ձեռնարկատիրության գործունեության ցուցանիշները
(2001թ տվյալներով)¹**

մլն.դրամ

Ցուցանիշի անվանումը	ՓՉ	ընդամենը ծեռնարկություն	ճշ տես.կշիռը ընդ. մեջ %
Քանակը (հատ)	751	890	84
Իրացման ծավալը	12849.1	20145.3	64
Ընդամենը հաշվարկված հարկեր այդ թվում՝	848.1	1606.3	53
Շահութահարկ	73.2	151.9	48
Եկամտահարկ	114.5	196.1	58
ԱԱՀ	372.2	739.6	50
Ակցիզային հարկ	39.1	80.3	48
Հողի հարկ	5.5	6.7	82
Գույքահարկ	13.3	22.1	60
Հաստատագրված վճար	68.8	82.9	83
Բնական ռեսուրսներ	30.7	37.2	82
Ավտոճանապարհային մասհանումներ	52.5	80.2	65
Այլ վճարներ	78.3	209.3	37

Փոքր գործարարության զարգացման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է անցնել հարկման, հաշվառման և հաշվետվական պարզեցված համակարգին՝ պահպանելով կամավորության սկզբունքն ու հիմք ընդունելով ձեռնարկության տարեկան համախառն հասույթի մեծությունը: Սակայն անկախ նշված պայմաններից, պարզեցված համակարգի մեջ չպետք է ներգրավել ենթաակցիզային ապրանքների արտադրությամբ զբաղված և վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ինվեստիցիոն ֆոնդերը, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղա-տները: Հարկման, հաշվառման և հաշվետվական պարզեցված համակարգին

¹ Հարկային պետական վարչության 2001թ ամփոփագիր:

անցած կազմակերպությունների հարկման օբյեկտը պետք է հանդիսանա հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամուտը, որը հաշվարկվում է որպես համախառն հասույթի և արտադրության ընթացքում օգտագործված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), հումքի, նյութերի, վառելիքի, տրանսպորտային միջոցների վարձավճարի, մատուցված ծառայությունների արժեքի, ինչպես նաև մատակարարներին վճարված ԱԱՀ-ի, մաքսավճարի, պետական տուրքի և այլ պարտադիր վճարների տարբերություն, կամ համախառն հասույթը, որն էլ ընդգրկում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), գույքի և այլ ակտիվների իրացումից ստացված գումարները:

Այսօր ԼՂՀ-ում գործող հարկային համակարգը բավական բարդ է և ընկալման առումով մատչելի չէ փոքր ձեռնարկություններին: Ըստ էության, հանրապետությունում յուրօրինակ վիճակ է ստեղծվել. մի կողմից՝ քչերը գիտեն՝ ինչպես պետք է ճիշտ վճարել հարկերը, մյուս կողմից՝ քչերն են հասկանում, ինչպես պիտի այդ հարկերը գանձել: Բացի այդ փոքր գործարարության զարգացման համար էական նշանակություն ունի ԼՂՀ հարկային համակարգի կայունությունը. հարկերի տեսակների, դրանց վճարման, հարկային արտոնությունների արագ կատարվող փոփոխությունները ռեալ դժվարություններ են ստեղծում արտադրության կազմակերպման, ֆինանսական իրավիճակի կանխատեսման վերլուծության, հեռանկարների որոշման և բյուջետային վճարումների ուղղությամբ: Հատկապես անթույլատրելի է հարկերի դրույքաչափերի փոփոխությունը ֆինանսական տարվա ընթացքում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկման նորմատիվ դրույքների փոփոխությունը նպաստում է ձեռներեցների մոտ նորամուծությունների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը. շատ ձեռնարկություններ սպասողական դիրք են գրավում ֆինանսական տարվա 2/3-ի ընթացքում: Բացի այդ հարկային օրենսդրության ցանկացած փոփոխության վերաբերյալ անհրաժեշտ է բացատրական աշխատանքներ տանել հարկատուների հետ: Այս աշխատանքները հարկային մարմինների կողմից կատարվում են բավարար մակարդակով՝ օգտագործելով զանգվածային լրատվության միջոցներն ու ուղղակի հանդիպումները հարկատուների հետ. այսպես, ԼՂՀ հարկային պետական վարչության մեթոդաբանության և տեղեկատվության բաժնի կողմից

տեղերից արված հարցումներին տրվում է միջին չափով ամսական մոտ 50 պարզաբանում:

Փոքր ձեռնարկությունները օգտվում են ԼԴՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր արտոնություններից:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները ազատվում են շահութահարկի, եկամտահարկի վճարումից իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Նշված ոլորտում արտոնություն գործում է նաև ավելացված արժեքի հարկի գծով. արտադրողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների՝ ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող վերամշակումը և վերամշակողի կողմից դրանց իրացումը, համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող ցանկի, ազատվում է ավելացված արժեքի հարկից: Գույքահարկի մասով գյուղացիական տնտեսությունների վրա տարածվում է ֆիզիկական անձանց հարկման կարգը, այսինքն՝ մինչև 3 մլն. դրամ արժողությամբ շինությունները գույքահարկով հարկման ենթակա չեն: Նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում) դրանց տարածքը 0,1 հեկտար և ավելի լինելու դեպքում ազատվում են հողի հարկից: Հողի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են՝ գյուղատնտեսական և անտառատնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկները և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, տոհմային և սորտափորձարկման ձեռնարկությունները, կայանները և հենակետերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով: Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի

մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:

Սակայն կարծում ենք, որ կարելի է այլ լրացուցիչ արտոնություններ կիրառել փոքր գործարարության ոլորտում՝ ուսումնասիրելով արտասահմանյան երկրների այս բնագավառում ունեցած փորձն ու տնտեսական աճի առումով դրանց տրված արդյունքները: ԱՄՆ-ում կորպորացիայի շահութահարկը սահմանվում է «աղաբլիթի» սխեմայով: Ֆեդերալ հարկի 34 տոկոս առավելագույն դրույքաչափի առկայությամբ կորպորացիաները 50 հազ.դոլար եկամտից վճարում են 15 տոկոս, իսկ հաջորդ 25 հազ.դոլարի համար՝ 25 տոկոս շահութահարկ: Մեծ Բրիտանիայում 33 տոկոս դրույքաչափի պայմաններում փոքր ձեռնարկությունները շահութահարկ վճարում են 25 տոկոսով: Ֆրանսիայում փոքր ձեռնարկությունները ազատվում են ավելացված արժեքի հարկից, իսկ Գերմանիայում՝ արդյունագործական հարկից: Բրազիլիայում փոքր ձեռնարկությունները ազատված են ԱԱՀ-ից, ծառայությունների հարկից, ֆինանսական գործարքների հարկից¹:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով չհարկվող շեմը (ընթացիկ եռամսյակին անմիջապես նախորդող չորս եռամսյակների ընթացքում ԱԱՀ-ով հարկվող գործարքների իրացումից հասույթի ընդհանուր ծավալի մինչև 4 մլն.դրամը հասնող մեծությունը) էական արտոնություն է փոքր ձեռնարկությունների համար: Այս առումով դրական կարելի է գնահատել նաև «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը, որը դեռևս քննարկման փուլում է: Այս օրենքի ընդունումը հնարավորություն կտա զգալի չափով կրճատել տնտեսության սովերայնությունը, քանի որ ենթադրում է հարկման դրույքաչափի իջեցում՝ ընդհանուր հասույթի նկատմամբ 2% դրույքաչափի կիրառմամբ: Բացի այդ պարզեցվում է հարկի հաշվարկման մեխանիզմը, կրճատվում է հաշվետվական աշխատանքների ծավալը, թեթևանում է նաև հարկային մարմինների անուղղակի տեսչական վերահսկողական աշխատանքները, փոխարենը այն պետք է լրացվի վարչարարության և իրացման ծավալների վերահսկողության ուժեղացմամբ: Կարևոր է նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների

1. Акуленок А.Н. Налоговый портфель.-М.Сомитек,1993г.:

կազմակերպման և անցկացման մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը, որը շոշափելի քայլ է փոքր գործարարության նկատմամբ հարկային վարչարարության կատարելագործման, ձեռնարկությունների գործունեությանը անհարկի միջամտության և դրանցում ապօրինի գործողությունների վերացման ուղղությամբ:

Այսպիսով, փոքր գործարարության պետական աջակցությունը առաջին հերթին ենթադրում է հարկային համակարգի բարեփոխումների հետևողական իրականացումը, այն է.

- հարկման և տնտեսավարման մեխանիզմի առանձին տարրերի վարկավորման, գնագոյացման, արժույթային կարգավորման միջև առկա հակասությունների վերացում, որը ԼՂՀ-ում հիմնականում տնտեսական ճգնաժամի ծնունդ է,

- քանի որ հարկերը փոքր գործարարության համար միշտ հանդիսանում են և ծախսերի կարևոր բաղադրիչ, և գործունեության վերջնական արդյունքի շահույթի կրճատման գործոն, կարևորվում է հարկի դրույքաչափի աստիճանական նվազեցումը այս բնագավառում,

- հարկային համակարգի անկայունության վերացումը, որը և փոքր գործարարության, և օտարերկրյա ներդրումները չխրախուսող, եթե ոչ հիմնական, ապա էական գործոնն է,

- հարկային համակարգի օրենսդրական բազայի կատարելագործում, փոքր գործարարության հարկման համակարգի պարզեցում,

- փոքր գործարարության համար հաստատագրված հարկերի կիրառում կախված ձեռնարկությունների ֆիզիկական բնութագրիչներից և գործունեության տեսակներից,

- արտոնագրման համակարգի ներդրում՝ արտոնագրի ձևի մեջ հարկի գումարը ներառելով,

- գործող հարկային օրենսդրության մեկնաբանության, խորհրդատվական աշխատանքների պարբերաբար իրականացում,

- քանի որ ԼՂՀ-ում ներդրման փուլում է միջազգային հաշվապահական և աուդիտի միջազգային ստանդարտներին անցումը, այս գործընթացը պետք է ուղեկցվի ձեռնարկատերերին համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ, մեթոդաբանական և խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ: